

Փ Ա Ր Ի Ա Ն Ա *)

(Ղ ե գ ե ն դ)

Բարձրագահ Աբուլն ու Մըթին սարեր
Մէջը մէջքի տըւած՝ կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջաւախքից էլ վեր՝
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:
Ասում են այնտեղ արծըւի նըման,
Ծիծղուն, կապուտակ երկընքի ծոցում,
Նըստում էր էն սէգ սարերի արքան
Իրեն Փարւանայ ճերմակ ամրոցում:
Փարւանայ արքան մի աղջիկ ունէր,
Ու ոչ մի սրսկան դեռ իրեն օրում
Այնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել
Իր որսն անելիս Մըթին սարերում:
Աշխոյժ մանկութեամբ զարգարում էր նա
Ծերութեան օրերն ու սարերն իր հօր,
Ու ապրում էր ծեր արքան Փարւանայ
Իրեն այն քնքոյշ ծաղկով բաղդաւոր:
Մեծ բաղդը սակայն առաջին էր դեռ:
Եկաւ այն օրն էլ հասաւ երջանիկ,

*) Փարւանա լիճը գտնւում է Ախալքալաքից 20 վ. հիւսիս-արեւելք: Փարւանա են կոչւում ն' այն թիթեռները, որ թրթռում են ճրագի շուրջը:

Ու զըրկեց արքան ուրախ դեսպաններ
Ամեն մի ամբողջ, ամեն արքունիք:
— Ո՞րտեղ է, ասաւ, էն քաջը, թէ կայ,
Իմ չընաշխարհիկ զըստերն արժանի,
Թող առնի իւր ձին, իր զէնքն ու զրահ,
Գայ, ցոյց տայ իրեն, իր բաղդը տանի...»

*
* *

Հագած, կապած զէնք ու զրահ
Ձիանք հեծած ամեհի,
Ահա եկել, հաւաքուել են
Կըտրիճները Կովկասի,
Ծեր Փարւանտ թագաւորի
Ապարանքի յանդիման
Կազմ ու պատրաստ ըսպասում են
Մօտիկ ժամին մըրցութեան:
Ըսպասում է ողջ աշխարքը
Եկած, կիտուած Փարւանտ,
Թէ որ կըտրիճն արդեօք պիտի
Էն սիրունին տիրանայ:

*
* *

Փողը հընչեց: Ահա փունջփունջ
Դըրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր գեղանի
Ու թագաւորն ալեհեր:
Հայրը ինչպէս մըռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարուած
Գուրս են գալի միասին:
Հառաչում է ողջ աշխարքը.
Կըտրիճները, քարացած՝
Երազների մէջ են ընկնում՝
Էս աշխարքից վերացած...

*
* *

— Նայիր, դըստրիկ, իշխանագուն
Այս քաջերին լայնալանջ,

Այժմ պիտի հանդէս դուրս գան,
 Պայքար մըտնեն քո առաջ.
 Մէկը իրեն ուժը ցոյց տայ,
 Միւսը շնորհքն իր բազկի,
 Որը ճարպիկ ձիարշաւը,
 Որն էլ թափը հր վազքի...
 Իսկ երբ կըռփեն առնի դադար,
 Յայտնի լինին քաջն ու վատ,
 Ու երբ անցնեն մեր առջևից
 Կըտրիճները պայազատ,
 Ընտրիր, զարկիր ձեռքիդ խնձորն
 Անյաղթներից անյաղթին,
 Որ ողջ աշխարհ մայիլ մընայ
 Անզուգական քո բաղդին»

*
 * *

Ասաւ արքան, ձեռքը ձրգեց
 Նշան տայ դու պայքարին,
 Աղջիկն յանկարծ առաջ եկաւ
 Կարմիր խնձորն իր ձեռին.
 — Գուցէ, հայրիկ, տըկար լաւին
 Յաղթէ մի վէս տըմարդի,
 Բայց չի կարող լինել երբէք
 Նա սիրելին իմ սըրտի...
 — Է՛յ, Փարւանայ չքնաղ փերի,
 Ի՞նչն է հաւան քո սըրտին...
 — Խըռըւում են կըտրիճները,
 Խնդրում նորից ու նորից:
 — Աստ, դատրիկ, ինչ ես ուզում
 Էս անըման քաջերից.
 Գանձ ես ուզում, ոսկի, արծաթ,
 Անդին քարեր ու դոհար,
 Աստղ ես ուզում, էլ երկնքից
 Վէր կը բերեն քեզ համար:
 — Ինչի՞ս են պէտք ոսկին, արծաթ
 Եւ կամ աստղը երկնքի,

Ոչ գոհար եմ ես պահանջում
Սէր-ընկերից իմ կեանքի:
Ես նրանից հնւր եմ ուզում,
Անշէջ հուրը սրբազան.
Ով կը բերի անշէջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան...»

*
* *

Ասաւ աղջիկն. իրար անցան
Կըտրիճները քաջարի,
Ձիանք հեծած թըռան հապճեպ
Դէպի չորս կողմըն աշխարհի.
Թըռան, շուտով գտնեն, բերեն
Անշէջ հուրը աղջկան...
Բայց... տարիք են գալիս, գնում;
Նրանք չը կան ու չը կան:

*
* *

—Հայրիկ, ինչո՞ւ ետ չը դարձան
Էն քաջերը սիրատենչ.
Միթէ, հայրիկ, ինձ մոռացան,
Էլ չեն բերիլ հուրն անշէջ:
—Ո՛չ, իմ դստրիկ, կըզան անշուշտ
Ու կը բերեն էս տարի.
Կըռիւներով արիւնըռուշտ
Լիքն է ճամբան քաջերի:
Ո՛վ իմանայ՝ պէտք է անցնեն
Մութ աշխարհից, սև ջրից,
Ո՛վ իմանայ՝ պէտք է փախցնեն
Եօթ գըլխանի դեւերից:
—Անց է կենում դարձեալ տարին,
Նայում է կոյսն ամեն օր.
—Ո՞ւր է, հայրիկ, երբ կը գայ նա,
Սարից թըռած՝ ձիաւոր:
Միշտ երազում ես տեսնում եմ
Էն հերոսին ապագայ
Հուր կարօտով թըռած իմ դէմ,

Լուսանում է... ու չը կայ
 — Կը դայ, դսարիկ իմ թանկագին.
 Հեշտ չի բերւում հուրն անշէջ...
 Շատ-շատ անգամ բերող հողին
 Ինքն է այլում նրա մէջ...
 Անց է կենում դարձեալ տարին,
 Նայում է կոյսն ամեն օր,
 Ոչ մի սարից, ոչ մի ճամբում
 Չի երևում ձիաւոր:
 — Հայրիկ, հայրիկ, միթէ չը կայ
 Էս աշխարհում անշէջ հուր.
 Թառամում է սիրտըս ահա,
 Պաղ է այս կեանքն ու տխուր:
 Էլ չի խօսում, մռայլ, տրտում,
 Լուռ է արքան ալեւոր,
 Սեւեւ ցաւերն իրեն սրտում
 Միտք է անում գլխակոր:

*
 * *

Այսպէս անցան շատ տարիներ.
 Տըխուր աղջիկն արքայի
 Նայեց-նայեց սարերն ի վեր,
 Ճամբաներին ամայի,
 Յոյսը հատաւ ու... լաց եղաւ.
 Այնքան արաւ լաց ու կոծ,
 Որ ծով կըտրեց արտասուքը,
 Ծածկեց քաղաքն ու ամրոց.
 Ծածկեց, կորան, ինքն էլ մէջը...
 Այժմ այնտեղ տըրտմաշուք
 Խոր Փարւանայ լիճն է ծըփում
 Յըստակ, ինչպէս արտասուք.
 Ու այն վըճիտ ջրերի տակ
 Յոյց են տալի մինչ այսօր
 Ծեր արքայի ճերմակ ամրոյն
 Ու շէնքերը փառաւոր:

*
 * *

Ասում են՝ այն թիթեռները,
 Որ գիշերուայ խաւարում
 Որտեղ ճըրագ, որտեղ կըրակ,
 Որտեղ լոյս է հէնց վառւում,
 Հաւաքւում են, շուրջը պատում,
 Մէջն են ընկնում խելագար,
 Ասում են թէ՛ այն Փարւանայ,
 Ջահէճներն են սիրավառ,
 Բշտապելուց թեւ են առել,
 Դարձել թեթեւ թիթեռներ,
 Ու, տակաւին, հուր տեսնելիս
 Մէջն են ընկնում անհամբեր,
 Ջանք է անում ամեն մինը
 Շուտով տանի, տիրանայ...
 Ու այրւում են, այրւում անվերջ
 Կըտրիճները Փարւանայ:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ